
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՈՐՊԵՍ ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՆ**

ԱՏԵՓԱՆՅԱՆ Կ. Կ.

Հայաստանի Հանրապետությունն անկախություն ձեռք բերելուց հետո 1990-ական թվականներին թևակոխեց որակապես նոր ժամանակաշրջան, որը քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերի արմատական վերափոխումների ու բարեփոխումների սկիզբ դարձավ: Այդ տարիներին Հայաստանում ձևավորվեց սոցիալ-տնտեսական այնպիսի իրավիճակ, որը պահանջում էր արտադրության ու բնակչության կենսապայմանների անկումը կանխելու, ինչպես նաև վարչաօրինակական տնտեսական համակարգը շուկայականով փոխարինելու նպատակով իրականացնել անհրաժեշտ բարեփոխումներ:

Ինչպես նախկին խորհրդային մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում տնտեսության կայունացման և ճգնաժամային վիճակի հաղթահարման ուղին իրավացիորեն համարվեց շուկայական մեխանիզմի մոդելը: Մակայն, ընդօրինակելով արևմտյան զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձը, անտեսվեց տնտեսական կյանքում պետության կարգավորիչ գործառույթի դերը: Բացի այդ, տեղական պայմանների ու սովորույթների, ազգային մենթալիտետի ու այլ առանձնահատկությունների անտեսումը երկրում առաջացրեց քառասային իրավիճակ, որի արդյունքները ճաշակում ենք մինչ օրս:

Հայաստանի Հանրապետությունն ԱՊՀ մյուս անդամների նման կրեց այն դժվարությունները, որոնք բնորոշ են անցումային փուլը հաղթահարող բոլոր պետություններին: Ավելին՝ այդ դժվարություններին ավելացան նաև այնպիսիները, որոնք առանձնահատուկ էին միայն մեր հանրապետությանը: Մասնավորապես, 1990-ականների սկզբի տնտեսական և վառելիքաէներգետիկ աննախադեպ ճգնաժամի հետևանքով 1990-1993 թթ. համախառն ներքին արդյունքը նվազեց ավելի քան 2 անգամ՝ 1993 թ. կազմելով 1990 թ. մակարդակի միայն 46.9%-ը, որն այդ ժամանակ ամենաբարձր տնտեսական անկման ցուցանիշներից էր ԱՊՀ երկրներում: Տրանսպորտային շրջափակման, վառելիքի ներմուծման ծավալների խիստ կրճատման, ինչպես նաև հայկական ատոմակայանի փակման պատճառով նույն ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտադրությունը պակասեց 58%-ով¹:

ԽՍՀՄ փլուզումից հետո նրա կազմի մեջ մտնող բոլոր հանրապետությունները, այդ թվում՝ Հայաստանը, ձեռք բերեցին իրավական ազատություն, անկախ պետականություն և սեփական տնտեսությունն ինքնուրույն զարգացնելու հնարավորություն: Նման պայմաններում օբյեկտիվորեն պահանջվում էր կարճ ժամանակա-

¹ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության թիվ 994 որոշում, 8 օգոստոսի, 2003, Ե., 2003, էջ 25, *European Bank of Reconstruction and Development (EBRD), Transition Report, 1999, p. 189.*

հատվածում իրականացնել շուկայական տնտեսավարման համակարգին բնորոշ այնպիսի բարեփոխումներ, ինչպիսիք են ապապետականացումը, բազմասեփականության ինստիտուտի ձևավորումը, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները, օրենսդրական և իրավական նոր դաշտի արմատավորումը, մասնավոր ձեռնարկատիրական գործունեության զարգացումը, սոցիալական համապատասխան միջավայրի ստեղծումը և այլն:

Բարեփոխումների սկզբնական փուլում Հայաստանի Հանրապետության տնտեսությունը բնութագրվում էր արտադրական ներուժի զգալի կորստով, սպառողական պահանջարկի նկատմամբ թույլ կողմնորոշմամբ, արդյունաբերության ցածր արդյունավետությամբ և այլն:

Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ հանրապետությունների շարքում Հայաստանն աչքի էր ընկնում գիտատնտեսական լուրջ ներուժով ու գիտնականների մեծ թվով և միությունում առաջնակարգ տեղ էր զբաղեցնում արտադրության մեջ զբաղված բարձր որակավորում ունեցող մասնագետների քանակով: Սակայն ճգնաժամային տարիներին արտագաղթի հետեվանքով ընդհատվեց աշխատուժի (մասնավորապես որակյալ) վերարտադրության բնականոն գործընթացը, աշխատանքի շուկայում շեշտակիորեն կրճատվեց երիտասարդ կադրերի թիվը, և խաթարվեց սերնդափոխության գործընթացը:

1991-1996 թթ. բարեփոխումների տարիներին, որը պայմանականորեն համարվում է անցումային գործընթացի առաջին փուլ, ձևավորվեցին տնտեսության կառուցվածքային վերափոխումներին նպաստող համապատասխան պայմաններ: Դրանցից կարևորն էր Ղարաբաղյան պատերազմի դադարեցումը, որը թույլ տվեց հասնելու որոշակի տնտեսական և քաղաքական կայունության: 1996 թ. սկսած՝ ստեղծվեցին տնտեսության զարգացման որոշակի պայմաններ, համեմատաբար բարելավվեցին դրա ենթակառուցվածքը և ներդրումային միջավայրը:

Տնտեսության կառուցվածքային բարեփոխումները, ինչպես նաև քաղաքական գործունեության բացասական հետևանքները չէին կարող չազդել աշխատանքի շուկայի ձևավորման, բնակչության զբաղվածության և կենսամակարդակի կտրուկ անկման վրա, որի հետևանքով մեծացավ աշխատուժի առաջարկի ու պահանջարկի միջև եղած անհավասարակշռությունը, էականորեն փոխվեց զբաղվածության ճյուղային կառուցվածքը, արագորեն ընդլայնվեց և ամրապնդվեց ոչ ձևական զբաղվածությունը, լայն թափ հավաքեցին ինքնազբաղվածությունն ու չգրանցված գործազրկությունը: Հանրապետության աշխատանքի շուկայում ձևավորվեց լարված մթնոլորտ, որը նպաստեց բնակչության հոծ խմբերի գործազրկությանը, համատարած աղքատացմանը, եկամուտների անհավասարությանը և հասարակության տագնապալի չափերի հասնող բևեռացմանը:

Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում սկսեց ձևավորվել 1990-ական թվականների սկզբին, և ինչպես անցումային տնտեսություն ունեցող մյուս երկրներում, այնպես էլ մեր հանրապետությունում այն գտնվում է ձևավորման ու կայացման փուլում: Այսօր աշխատանքի շուկայի ձևավորման վրա ազդող հիմնական խոչընդոտներն են ստվերային տնտեսության աննախադեպ մեծ մասշտաբները, մասնավորեցման և ապապետականացման բացասական հետե-

վանքները, թաքնված գործազրկությունը, օրենսդրական և իրավական դաշտի անկատարությունը, համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը կամ թերի զարգացած լինելը, աշխատուժի չկարգավորված միգրացիան:

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի շուկայի ձևավորման ընթացքում չպետք է անտեսել նաև այնպիսի կարևոր գործոնների դերը, ինչպիսիք են ժողովրդագրական իրավիճակը, պատերազմի և շրջափակումների հետևանքով բնակչության միգրացիան, բնակչության հսկայական թվերի հասնող արտագաղթը, ինչպես նաև տնտեսության կառուցվածքային փոփոխությունները:

Մեր երկրում իրականացվող բարեփոխումների առավել բարդ ու հակասական գործընթացի հիմնական ոլորտներից մեկն աշխատանքի շուկայի ձևավորումն է, որը խորքային փոփոխություններ առաջ բերեց զբաղվածության քաղաքականության համակարգում:

Ինչպես հայտնի է, հասարակության շարժիչ ուժն աշխատանքային ներուժն է, որը հանդես է գալիս բնական հարստությունների՝ հանքահումքային, վառելիքաէներգետիկ, հողային, ջրային, կենսավերարտադրողական, տնտեսական, ինչպես նաև աշխատանքային ներուժի և այլ տեսքերով: Հասարակության այդ ռեսուրսային ներուժը շատ առաձգական և ժամանակի ու տարածության մեջ փոփոխվող մեծություն է: Այն պայմանավորված է ոչ միայն տվյալ երկրում այդ ռեսուրսների առկայությամբ, այլև դրանք տնտեսական շրջանառության մեջ խելամտորեն ընդգրկելու և օգտագործելու համար ձևավորված արտադրատնտեսական ու կառավարման համակարգով, աշխատանքային, հատկապես մտավոր, ռեսուրսների առաջադիմական վերարտադրության համար որոշակի նախադրյալների առկայությամբ²:

Աշխատանքի շուկան բավական ընդգրկուն հասկացություն լինելով հանդերձ՝ շուկայական տնտեսության առավել տարողունակ, բարդ կարգավորվող և դժվար կանխատեսելի տարրերից է և հիմնականում վերաբերում է աշխատուժի առուծախին՝ դրա փոխանակությանը: Վերջինս էլ աշխատուժի վերարտադրության կարևորագույն փուլերից է: Աշխատանքի շուկան մի կողմից ենթարկվում է շուկայի օբյեկտիվ օրենքներին ու օրինաչափություններին, իսկ մյուս կողմից՝ դրա բարձր ճկունությունն ու զարգացումը կախված են աշխատուժի (առանձին անհատների) սուբյեկտիվ վարքագծից, որը լի է որոշակի հիմնախնդիրներով: Աշխատանքի շուկան՝ իբրև շուկայական տնտեսության կարևորագույն կատեգորիա, ունի նաև յուրահատկություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, քանի որ հետազոտության առարկան հենց աշխատանքն է՝ որպես մարդկանց նպատակահարմար գործունեության արդյունք: Աշխատանքի՝ որպես ուսումնասիրության օբյեկտի առանձնահատկությունը հետևյալն է. աշխատանքը մարդկանց նպատակաուղղված գործունեությունն է՝ նյութական ու հոգևոր բարիքների արտադրության և ծառայությունների մատուցման նպատակով, աշխատանքն ապրանք չէ, այլ այդպիսին են վերջինիս արդյունքները, աշխատանքը ոչ միայն անհատի, այլև ամբողջ հասարակության գոյության և զարգացման հիմքն է, որի գործընթացում

² **Խոջաբեկյան Վ. Ե.**, Ջբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Ե., 1998, էջ 12:

ձևավորվում է սոցիալ-աշխատանքային հարաբերությունների որոշակի համակարգ:

Տնտեսագիտական գրականության մեջ հավասարապես կիրառվում են ինչպես «աշխատուժի շուկա», այնպես էլ «աշխատանքի շուկա» հասկացությունները՝ միննույն ժամանակ աշխատուժը դիտելով որպես առք ու վաճառքի օբյեկտ, քանի որ ձեռնարկատիրոջը հետաքրքրում է աշխատողների այն թվաքանակը, որը կարող է ապահովել անհրաժեշտ ծավալի աշխատանքի կատարումը, իսկ վարձու աշխատողներին՝ աշխատավարձով որոշված աշխատանքի ծավալը: Նշված երկու տնտեսագիտական կատեգորիաներն անիմաստ է դիտարկել առանձին-առանձին, քանի որ աշխատանքը և աշխատուժը իրարից անկախ գոյություն ունենալ չեն կարող: Հետևաբար, իմաստային տարբերությունն այստեղ այն է, թե հեղինակը տվյալ տնտեսագիտական կատեգորիան ո՞ր տեսանկյունից է դիտարկում:

Հայաստանի Հանրապետությունում 2002-2004 թթ. աշխատանքային ռեսուրսների, դրանց բաղադրիչների ու զբաղվածության ճյուղային կառուցվածքի շարժի վերաբերյալ ամփոփ պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը.

ՀՀ աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը 2002-2004 թթ.
(հազ.մարդ, միջին տարեկան)³

Թվականներ	2002	2003	2004
աշխատանքային ռեսուրսներ, ընդամենը	1976,9	2008,4	2041,5
տնտեսապես ակտիվ բնակչություն	1240,1	1232,4	1196,5
տնտեսությունում զբաղվածներ, այդ թվում՝	1106,4	1107,6	1081,7
արդյունաբերություն	143,1	138,8	132,0
գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն	500,8	509,0	507,1
շինարարություն	36,1	37,2	33,3
տրանսպորտ և կապ	40,2	41,8	46,5
առևտուր, հանրային սնունդ	99,6	105,0	103,8
բնակարանային կոմունալ տնտեսություն, բնակչության կենցաղային սպասարկման արտադրական տեսակներ	30,2	32,6	33,0
առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	66,9	60,3	49,8
կրթություն	117,7	111,7	100,5
մշակույթ և արվեստ	20,6	20,5	20,1

³ Աղյուսակը կազմված է Հայաստանը թվերով 2005, վիճակագրական գրքույկ, Ե., 2005, էջ 24-25,26-27, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-հոկտեմբերին» ժողովածուի տվյալների հիման վրա: 2005 թ. հունվար-հոկտեմբերին տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում կազմել է 1206,9 հազ.մարդ:

գիտություն և գիտական սպասարկում	13,2	12,3	12,2
վարկավորում և ապահովագրություն	5,2	5,0	5,6
կառավարման ապարատ	23,8	25,0	26,6
այլ ճյուղեր	9,0	8,4	11,2
պաշտոնապես գրանցված գործազուրկներ	133,7	124,8	114,8
տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	736,8	776,0	845,0

Ընդհանրացնելով շարադրվածը՝ կարելի է արձանագրել, որ աշխատանքի շուկան, լինելով շուկայական տնտեսության կարևորագույն և ինքնուրույն բաղադրիչ տարր, աշխատանքի առաջարկի ու պահանջարկի ամբողջական հարաբերությունների համակարգ է: Աշխատանքի շուկայում են սահմանվում աշխատուժի գինն ու վարձակալման պայմանները: Այստեղ են արտացոլվում նաև զբաղվածության հիմնական կառուցվածքի փոփոխությունները, ինչպես նաև գործազրկության մակարդակն ու դրա միտումները:

Հարկ է ընդգծել, որ այսօր նույնիսկ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում անհնար է ապահովել լիարժեք զբաղվածություն, քանի որ հենց շուկայական տնտեսության յուրահատկություններից մեկը գործազրկության որոշակի մակարդակի առկայությունն է: Այսինքն՝ խոսքը գործազրկության բնական մակարդակի մասին է, որ հաճախ է վկայակոչվում մամուլում և մասնագիտական գրականության մեջ:

Այսօր պետության տնտեսական քաղաքականության առանցքային հիմնադրություններից մեկը պետք է լինի գործազրկության առաջացման մակրոտնտեսական պատճառների բացահայտումն ու վերլուծումը: Հետաքրքիրն այն է, որ գործազուրկների մի ստվար բանակ, չցանկանալով աշխատել ցածր վարձատրվող աշխատատեղերում, նախընտրում է ընդգրկվել պատահական, ժամանակավոր, սակայն բարձր վարձատրվող աշխատանքներում: Եվ, ընդհակառակը, ստիպված գործազուրկի կարգավիճակ ձեռք բերած անձը համաձայն է զբաղեցնել նույնիսկ ցածր վարձատրվող աշխատատեղ, սակայն աշխատանք չի գտնում: Գործազուրկների այս կատեգորիան հիմնականում բնակվում է հանրապետության սահմանամերձ քաղաքներում ու գյուղերում, աղետի գոտում:

Գործազրկության շարունակական աճին նպաստում է նաև Հայաստանի աշխատաշուկայում աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև առկա մասնագիտական խիստ անհամապատասխանությունը: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ աշխատուժի պահանջարկը կազմում է դրա առաջարկի միայն 4%-ը: Շուկայական բարեփոխումները բացասական ազդեցություն ունեցան նաև աշխատուժի գնի ձևավորման վրա, որն այսօր շատ ցածր է և հիմնականում պայմանավորված է հանրապետության տնտեսական զարգացման ու աշխատանքի արտադրողականության ոչ բավարար մակարդակով:

Հայաստանի աշխատանքի շուկային խիստ բնորոշ է աշխատուժի ցածր պահանջարկը, որի հետևանքով տնտեսության մեջ զբաղվածության թվաքանակը տարեցտարի նվազում է՝ ի հաշիվ գործազուրկների թվի և գործազրկության մակարդակի աճի: Սակայն չգրանցված զբաղվածության հետևանքով աշխատանքի

իրական պահանջարկն ավելի բարձր է: Ինչպես վկայում են 2001-2004 թթ. Ազգային վիճակագրական ծառայության ընտրանքային հետազոտությունների արդյունքները, թաքնված զբաղվածությունը կազմել է տնտեսության մեջ զբաղվածների 22,6%-ը⁴, որոնց մի մասը հաշվառված է որպես գործազուրկ⁵: Ընդ որում, մտահոգիչ է այն հանգամանքը, որ չգրանցված գործունեություն իրականացնող գործատուների ու ինքնազբաղվածների տեսակարար կշիռը գործատուների և ինքնազբաղվածների ընդհանուր թվի մեջ 2004 թ. օգոստոսի տվյալներով կազմել է 73,0%⁶, թեև նախորդ տարիների համեմատ իջել է: Նվազել է նաև բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը, քանի որ աշխատանքային ռեսուրսների կազմում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերն ընթանում են հոգուտ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության: Էժան աշխատուժի գինը պայմանավորված է նաև այն պարզ հանգամանքով, որ հանրապետության աշխատաշուկային խիստ բնորոշ է աշխատանքային ռեսուրսների վերարտադրության բարձր տեմպը: Այս առումով պետության տնտեսական քաղաքականությունը պետք է մշտապես միտված լինի նոր աշխատատեղերի ստեղծմանը, եղածների կատարելագործմանը, կադրերի մասնագիտական ուսուցմանն ու վերապատրաստմանը և որակավորման մակարդակի բարձրացմանը:

Հայաստանում աշխատուժի չափազանց ցածր գնի հիմնական պատճառներից մեկն էլ նրա ցածր արժեքն է: Ինչպես ապրանքային, այնպես էլ աշխատանքի շուկայում, առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունից կախված, գները շեղվում են: Աշխատուժի գնի խիստ ցածր մակարդակը պայմանավորված է դրա բարձր առաջարկով, գործազրկության առկայությամբ ու հակամենաշնորհային միջոցառումների բացակայությամբ:

Շուկայական տնտեսության անցնելը հանրապետության աշխատանքի շուկայում առաջ բերեց սեռերի անհավասարություն. մասնավորապես ձևավորվեց կանանց նկատմամբ խտրականության մտահոգիչ քաղաքականություն: Վերջինիս հիմնական դրսևորումներից է այն, որ կանանց մեծ մասը հիմնականում զբաղված է զբաղվածության այսպես կոչված «կանացի» ավանդական ոլորտներում: Մեր բառապաշարում ի հայտ եկավ «գենդեր» հասկացությունը, որը գոյություն չունեի համայնավարական հասարակության պայմաններում: Եթե վիճակագրական տեղեկատվությունը վերլուծվի, ապա պարզ կերևա, որ վարչահրամայական տրնտեսության պայմաններում, ըստ սեռերի զբաղվածության տեսակարար կշռի,

⁴ *Labour Force and Child Labour in Armenia. Report (National Statistical Service of the Republic of Armenia), Yerevan, 2004, p.15.*

⁵ Չբաղվածության պետական ծառայությունում հաշվառված գործազուրկները հանրապետության տարածքում մշտապես բնակվող 16 և բարձր տարիքի աշխատունակ և գեթ մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող այն քաղաքացիներն են, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, աշխատանք են փնտրել «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տարածքային կենտրոնների օգնությամբ, պատրաստ են եղել անցնել աշխատանքի՝ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանում կամ անմիջապես:

⁶ *Labour Force and Child Labour in Armenia. Report (National Statistical Service of the Republic of Armenia), p. 15.*

առաջնությունը պատկանում էր արդյունաբերությանը: Ներկայումս կանանց զբաղվածության կառուցվածքում մեծացել է այնպիսի ճյուղերի տեսակարար կշիռը, ինչպիսիք են առևտուրը, կրթությունը, մշակույթը, առողջապահությունը և ծառայությունները, որտեղ համեմատաբար ցածր է վարձատրությունը, սակայն մեծ են աշխատանքն ընտանեկան պարտականությունների հետ համատեղելու հնարավորությունները: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունն արձանագրում է, որ 1998-2003 թթ. կանանց տեսակարար կշիռն առողջապահության բնագավառում կազմել է միջինը 75, իսկ կրթության ոլորտում՝ 76%⁷:

Սակայն 2004-2005 թթ. կրթության ոլորտի օպտիմալացման հետեվանքով տեղի ունեցավ աշխատատեղերի՝ ահռելի թվերի հասնող կրճատում և բարձրագույն կրթություն ունեցող բազմաթիվ մարդիկ, հայտնվելով դպրոցից դուրս, համալրեցին գործազուրկների շարքերը: Ըստ կանխատեսումների, 2003-2008 թթ. կկրճատվի 20 հազար ուսուցիչ և, ընդհանուր առմամբ, ուսուցիչների շարքերը կնվազեն 35%-ով⁸: Այս պայմաններում հրատապ է աշխատանքի շուկայի և զբաղվածության գենդերային այն հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որոնք պետք է իրենց ուրույն տեղը զբաղեցնեն պետության սոցիալական քաղաքականության առանցքում: Դրանց լուծումը ներկա փուլում պետք է դասել երկրի տնտեսական զարգացման հիմնական նպատակների շարքում:

Շուկայական հարաբերությունների մուտքն աշխատանքի շուկա թելադրում է նաև մարդկային ռեսուրսների կառավարման՝ մասնավորապես կադրային քաղաքականության կատարելագործման բնագավառում նոր մոտեցում, որը նույնպես պայմանավորված է երկրում ձևավորված հասարակական-քաղաքական և տնտեսական իրավիճակով: Կադրային քաղաքականությունը տնտեսական բարեփոխումների շարքում առաջնային նշանակություն ունեցող հիմնախնդիրներից է: Այս առումով կարևոր են կրթական համակարգի բարեփոխումները: Բարեփոխման կարիք է զգում նաև գիտական նյութատեխնիկական բազան: Առկա մասնագիտական գրականությունը տեղայնացված չէ, ուստի հաճախ նույնիսկ չի ընկալվում ընթերցողի կողմից: Գիտական հաստատություններում պետպատվերի և աշխատատեղերի միջև առկա է խիստ անհամապատասխանություն: Պետպատվերի շրջանակներում ավարտած բազմաթիվ շրջանավարտներ կա՛մ գործազուրկ են, կա՛մ էլ չունեն իրենց մասնագիտությանը և որակավորմանը համապատասխան աշխատանք:

Շուկայական տնտեսության անցումը հանգեցրեց տարբեր նպատակներ հետապնդող մի շարք ինստիտուցիոնալ կառույցների առաջացմանը: Հանրապետությունում աշխատանքի շուկայի բնագավառում դրանց շարքին է դասվում 2000 թ. Քաղաքացիական ծառայության խորհրդի ներդրումը, որի հիմնական նպատակներից մեկը պետական կառավարման ոլորտի գործունեության արդյունավետության բարձրացումն է, բյուրոկրատական քաշքշուկի վերացումը և կոռուպ-

⁷ Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ե., 2004, էջ 58:

⁸ Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում, Ե., 2005, էջ 48:

ցիայի նվազեցումը: Քաղաքացիական ծառայության խորհրդի ներդրումը կադրային քաղաքականության կատարելագործման բնագավառում առաջին քայլերից է, որի հետագա զարգացումը պետք է մշտապես գտնվի պետության ուշադրության կենտրոնում:

Անցնելով շուկայական տնտեսության՝ Հայաստանը նախատեսեց իրականացնել մի շարք տնտեսական բարեփոխումներ, որոնց նպատակն էր տնտեսությունը կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան, միջազգային կազմակերպություններին անդամակցելու և համագործակցելու միջոցով ձևավորել այնպիսի միջավայր, որը կնպաստի մեր տնտեսության արագ վերականգնմանը և համաշխարհային տնտեսական հարաբերություններին ինտեգրվելուն: Միջազգային այդպիսի հանրահայտ կազմակերպություններից է Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, որին Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է 1992 թվականից: Այդ կազմակերպությունը, 1991 թ. սկսած, մշակում է աշխատանքային հարաբերությունների և աշխատանքի պայմանների կարգավորմանն ուղղված միջազգային չափորոշիչներ: Այն մեծ համբավ ու հեղինակություն ունի ամբողջ աշխարհում և ազդեցիկ ներկայություն միջազգային գործընկերության դաշտում: Հայաստանի կողմից Աշխատանքի միջազգային կազմակերպության առջև ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղությամբ 2004-2005 թթ. ընթացքում վարվող հետևողական աշխատանքները դրա շրջանակներում Հայաստանի վարկանիշի կտրուկ բարձրացման և ակտիվ գործընկերային մթնոլորտի ստեղծման հիմք են դարձել: Ներկայումս Հայաստանն Աշխատանքի միջազգային կազմակերպության առաջնային նշանակություն ունեցող երկրներից է, ուստի դրա ստորաբաժանումներն առանձնահատուկ հետաքրքրվում են՝ մեր երկրում ծրագրային գործունեություն ծավալելով: Հաշվի առնելով սոցիալ-տնտեսական հարաբերությունների ոլորտում Հայաստանում առկա խնդիրներն ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նկատառումները՝ անհրաժեշտ է ավելի գործուն դարձնել Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ մեր երկրի համագործակցությունը:

Հանրապետության աշխատանքի շուկայում առկա խնդիրների հաղթահարման և տնտեսության բարգավաճման համար պետությունն անպայման պետք է ձեռնամուխ լինի սոցիալ-տնտեսական միջավայրի բարելավմանը: Պետք է վերականգնվի պետության տնտեսական գործառնությունը, և ակտիվ աջակցություն ցուցաբերվի հատկապես տեղական արտադրողների նկատմամբ: Դա կհանգեցնի տնտեսավարող սուբյեկտների թվի ու նոր աշխատատեղերի ավելացմանը, ինչն էլ իր հերթին, կնպաստի բնակչության զբաղվածության և կենսամակարդակի բարձրացմանը, աղքատության կրճատմանն ու սոցիալական իրավիճակի բարելավմանը: Անցումային տնտեսություն ունեցող բազմաթիվ երկրների փորձը վկայում է, որ պետությունը պետք է ակտիվ միջամտի երկրում ընթացող բոլոր գործընթացներին ու երևույթներին: Դա առավելագույնս պետք է ուղղված լինի երկրի տնտեսության ռազմավարական, եկամտաբեր և հեռանկարային ճյուղերի զարգացմանը:

Այսպիսով, աշխատանքի շուկան այն վայրն է, որտեղ հանդիպում են վարձու աշխատողն ու գործատուն, որոնց միջև ձևավորվում են որոշակի աշխատանքային

հարաբերություններ: Իսկ աշխատանքը մտավոր և ֆիզիկական ջանքերն են, որոնք մասնակիորեն կամ ամբողջովին գործածվում են որոշակի արդյունքի հասնելու նպատակով, չհաշված այն բավարարվածությունը, որը պատճառում է անմիջականորեն կատարված աշխատանքը⁹:

Շուկայական տնտեսության պայմաններում պետությունը նույնպես հանդես է գալիս որպես առանձնահատուկ տնտեսավարող սուբյեկտ՝ այս կամ այն չափով և ձևերով մասնակցելով հասարակության տնտեսական կյանքին: Ինչպես աշխատանքի շուկայում, այնպես էլ տնտեսական կյանքի մյուս ոլորտներում պետության միջամտության չափի և դրա հետևանքների գնահատականի խնդիրը վիճահարույց հարցերից է¹⁰:

Քանի որ աշխատանքի շուկան շուկայական տնտեսության կարևորագույն և ինքնուրույն բաղկացուցիչներից է, սերտորեն կապված է տրնտեսական համակարգի մյուս տարրերի՝ մասնավորապես ապրանքների և ծառայությունների շուկայի հետ: Ընդ որում, այս երկու շուկաների կապը փոխադարձ է, քանի որ դրանք առանց մեկը մյուսի գոյություն ունենալ չեն կարող: Ապրանքների ու ծառայությունների շուկայի ընդլայնման և զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկն աշխատանքի շուկայի զարգացումն է: Հետևաբար, այն բոլոր գործոնները, որոնք ազդում են ապրանքների և ծառայությունների շուկաների վրա, որոշակի առանձնահատկություններով հանդերձ՝ ներգործում են նաև աշխատանքի շուկայի վրա: Այդ առանձնահատկություններն իրենց հետքն են թողնում շուկայում ձևավորվող հարաբերությունների գործընթացում:

Աշխատանքի շուկային բնորոշ առանձնահատկություններից աչքի են ընկնում հիմնականում հետևյալները՝ ապրանքի սեփականատիրոջից սեփականության իրավունքի անբաժանելիությունը, ոչ դրամական գործոնների դերի առկայությունը, որոնցից կարևորագույններն են աշխատանքի բնույթն ու պայմանները, աշխատատեղերի պահպանման երաշխիքը և այլն, մասնագիտացված ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների առկայությունը: Աշխատանքի շուկայի սուբյեկտների միջև յուրահատուկ հարաբերությունների ծագումը դրանց գործունեության տարրեր կողմերի առավել հստակ և մանրակրկիտ կանոնակարգման անհրաժեշտություն է առաջացնում: Այստեղից էլ բխում է աշխատանքի շուկայի հազեցվածությունը զանազան ինստիտուցիոնալ այնպիսի կառույցներով, ինչպիսիք են զբաղվածության կարգավորման զանազան կենտրոններն ու ծառայությունները, արհեստակցական միություններն ու աշխատողների շահերը պաշտպանող այլ բազմաբնույթ հասարակական կազմակերպությունները:

Աշխատանքի շուկայի վրա հատկապես ներգործում են նաև սոցիալ-ժողովրդագրական գործոնները, որոնցից են եկամտի մեծությունը, ընտանեկան դրությունը, ազգային սովորույթներն ու ավանդույթները, կենցաղը, մշակույթը և այլն:

Այժմ ՀՀ-ում մակրոտնտեսական վերափոխումների ճանապարհով որոշակի հաջողություններ են ձեռք բերվել: Սպառողական շուկան հազեցված է տեղական

⁹ **Маршалл А.**, *Принципы экономической науки*, М., 1993, с. 124.

¹⁰ **Մարկոսյան Ա. Խ.**, *Տնտեսագիտություն բոլորի համար*, Ե., 2001, էջ 183:

արտադրության որոշակի ապրանքներով ու ծառայություններով, զարգանում են անշարժ գույքի, ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև աշխատանքի շուկաները: Առկա է այն բնական և տնտեսական ռեսուրսների հզոր ներուժը, որն արդյունավետ ուղղորդելու և տնտեսական աճի բարձր տեմպերի հասնելու համար մեծ նշանակություն ունի նաև աշխատանքային ռեսուրսների ճիշտ, հետևողական ու արդյունավետ օգտագործումը: Առաջիկա տարիներին աշխատանքի շուկայի կառուցվածքը և զարգացման միտումներն անմիջականորեն առնչվելու են ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև տարածաշրջանի քաղաքական, տնտեսական, կառուցվածքային ու կառավարման համակարգի բարեփոխումների, ինչպես նաև օրենսդրական և իրավական դաշտերի կատարելագործման, սոցիալական դաշտի սուբյեկտների կայացման ու դրանց միջև փոխհարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը:

РЫНОК ТРУДА КАК ВАЖНЕЙШИЙ ФАКТОР РАЗВИТИЯ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ В РА

СТЕПАНЯН К. К.

Резюме

В статье исследован рынок труда Армении. Представлена краткая характеристика экономической ситуации, структуры экономики республики, а также характеристика особенностей рынка труда, структуры трудовых ресурсов в 2002-2004 гг.

Особое внимание уделено исследованию гендерных проблем рынка труда и занятости, подчеркнута их актуальность в социальной политике государства. Отмечена решающая роль государства в условиях рыночной экономики как особого хозяйствующего субъекта, напрямую либо косвенно регулирующего экономическую жизнь общества и принимающего участие, в частности, в процессе создания рабочих мест, профессионального образования, переквалификации, повышения квалификации кадров и оздоровления социально-экономической атмосферы в республике.